ԿԱՐԾԻՔ

Համիդռեզա Կամիարի «Մեծահասակների կրթության հիմնախնդիրն Իրանի կրթության համակարգում» վերնագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Երրորդ հազարամյակում մարդկությունն ապրում է աշխարհաքաղաքական փոխակերպումներով ուղեկցվող նոր փուլ, և այդ համատեքստում խիստ արդիական են մարդկային կապիտալի զարգացման և զբաղվածության ապահովման հիմնահարցերը: Կյանքի տարբեր ոլորտներում ընթացող համակարգային փոփոխությունները թելադրում են այնպիսի տեսական հայեցակարգերի մշակման և գործնականում կիրառման անհրաժեշտություն, որոնք վերաբերում են ամբողջ կյանքի ընթացքում կրթության տարբեր տեսանկյուններին: Գրախոսվող ատենախոսությունում հետազոտված է սոցիալ-մշակութային կարևոր նշանակություն ունեցող գիտական հիմնախնդիր: Համիդռեզա Կամիարին ներկայացրել է արդիական ուսումնասիրություն՝ հաշվի առնելով հատկապես տարածաշրջանային սոցիալ-մշակութային և ժողովրդագրական գործոններն ու առանձնահատկությունները: Ատենախոսը կառուցողական քննադատությամբ վերլուծել է Իրանի կրթության համակարգում մեծահասակների կրթության հիմնախնդիրը:

Ներածության մեջ հիմնավորել է թեմայի արդիականությունը, հստակ սահմանել է նպատակը, ձևակերպել հինգ առաջադիր խնդիրները, գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող չորս դրույթները:

Հետազոտության նորույթն Իրանում մեծահասակների կրթության ներկա վիճակի, պայմանների, ոլորտի խնդիրների ու մարտահրավերների, դրանց բարելավմանն ուղղված կառուցակարգերի քննարկումն է, սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությունը:

Հեղինակը հետազոտության հիմնախնդիրը դիտարկում է կրթության ժամանակակից զարգացումների և հարացույցի ձևավորման առանցքային հիմնադրույթների լայն համատեքստում:

Ուսումնասիրության առարկայի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների քննությունը կատարվել է ատենախոսի ինքնուրույն դիտարկումներով:

Գրախոսվող ատենախոսության գիտատեսական և կիրառական արժեքը պայմանավորված է նրանով, որ խորությամբ ուսումնասիրել է Իրանում մեծահասակների կրթության համակարգն ըստ մանկավարժական, մասնագիտական, մեթոդակազմակերպական, տեխնոլոգիական կողմերի ու դրդապատճառների:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք, պատշաճ աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքեր:

Հետազոտության բաղադրիչները՝ նպատակը, առաջադրված խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթներն ու ամփոփիչ եզրակացություններն ունեն իմաստային համապատասխանություն և օրգանական կապերով արտահայտում են ատենախոսության տրամաբանությունը:

Առաջադրված խնդիրները լուծված են ատենախոսության տարբեր գլուխներում:

«Իրանի կրթության համակարգը» խորագրով առաջին գլխում մեկնաբանված են Իրանի կրթության զարգացման պատմությունը՝ սկսած Հին Իրանի կրթադաստիարակության ակունքներից մինչև 20-րդ դարի կրթությունը, ինչպես նաև կրթության միջազգային աստիճանակարգման համաձայն Իրանի կրթության նորագույն համակարգի ութ մակարդակները՝ ըստ կառուցվածքի և կառավարվող նախարարությունների ու կազմակերպությունների, պետական և ոչ պետական դպրոցներին տրված լիազորությունների, օրենսդրական հիմքերի: Հեղինակն անդրադարձել է նաև հատուկ և երեկոյան դպրոցների կազմակերպման և ուսուցման հարցերին: Ատենախոսն իրավացիորեն գտնում է, որ կարգավորված կրթությունը մեծապես կնպաստի անգրագիտության կրճատմանը:

Հետազոտության առանցքային հասկացությունները դիտարկվել են երկրորդ գլխում՝ մեծահասակների կրթության առանձնահատկությունների վերաբերյալ, որը բաղկացած է յոթ ենթագլուխներից: Այս գլխում ներկայացված են մեծահասակների կրթությանը վերաբերող բնութագրումները, մեծահասակների կրթության զարգացման պատմությունը միջազգային համագումարների մոտեցումների համատեքստում, շեշտադրվել է ԻԻՀ-ում մեծահասակների կրթության կարևորության գիտակցումը:

Ատենախոսը քննության է ենթարկում մեծահասակների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները, վերլուծել է ինտելեկտի առումով Վարներ Շայի և նրա հետևորդների հետազոտությունների արդյունքները, այս իմաստով հատկանշական են ինտելեկտի «հեղուկ» և «բյուրեղային» տեսակները և դրանց դրսևորումները մեծահասակների կրթության ընթացքում տեղեկատվության մշակման արագության, ուշադրության, հիշողության, կամային որակների և վարքագծի գործում: Դիտարկել է մեծահասակների կրթության սկզբունքները, հատկանշել է հիմնախնդրային եզրույթի առնչությամբ պատմա-մշակութային, կրոնական, սոցիալ-տնտեսական, զաղափարական և կրթության համակարգի զարգացման աստիճանի դիտանկյունները:

Քննության է ենթարկել նաև «մեծահասակների կրթություն» հիմնախնդրային եզրույթի կապը միջազգայնորեն ընդունված «անդրագոգիկա» հասկացության հետ (հունարեն թարգմանությունից «ander» նշանակում է մարդ, մեծահասակ տղամարդ և «agogus» ուղեկցել, ղեկավարել), հեղինակը սեռային խտրականությունը բացառելու նպատակով դիտարկումները շարունակել է «թելիագոգիկա» (Մոհրինգ), «հումանագոգիկա» (Նուդսոն), «հիութագոգիկա» (Հեյս և Քենյոն) հասկացությունների հետ: Քննարկումներն ի մի բերելով՝ հեղինակը բոլոր սահմանումներն ամփոփել է երեք իմաստներով՝ որպես մեծահասակների ուսումնառության գործընթաց, տեխնիկական և սոցիալական գործունեություն:

«Մեծահասակների կրթության վիճակն Իրանում» ատենախոսության երրորդ գլխում, հեղինակը վերլուծել է Իրանում մեծահասակների կրթության խնդիրներն ու

դժվարությունները, 1956-2016թթ. մարդահամարի արդյունքում գրանցված տվյալները՝ ըստ բնակչության տարեկան աճի ցուցիչի, Իրանում գրագիտության մակարդակի, կրթության մարդկային ռեսուրսների մասին վիճակագրական տվյալները, մեծահասակների կրթության ռազմավարական ուղղությունները և 14 առաջնահերթությունները, կրթական քաղաքականությունը ֆորմալ և ոչ ֆորմալ հատվածում, գրաճանաչությունն ապահովող կազմակերպությունների գործունեությունը, անգրագիտության չհաղթահարման պատճառները՝ պայմանավորված կառուցվածքային, գործընթացային, միջավայրի հետ կապված խնդիրներով:

Առանձնահատուկ արժևորման են ենթակա հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ սոցհարցումների մեթոդիկան, արդյունքների վերլուծությունն ու դրանց աղյուսակների տեսքով ներկայացումը: Հարցաթերթիկի վավիդությունը և կայունությունը գնահատվել է Քրոնբախի ալֆայի միջոցով, ինչը վկայում է մշակված հարցերի հավաստիության պատշաճ մակարդակի մասին: Նմուշ խմբի ծավալը որոշելու համար կիրառել է Մորգանի աղյուսակը, որի հիման վրա ստացել է հարցվողների 384 թիվը, սակայն հավաստի են համարվել 342-ը:

Հարցումները խորությամբ լուսաբանում են հիմնախնդրի սոցիալ-ժողովրդագրական, մանկավարժական, կազմակերպական, մասնագիտական, ֆիզիոլոգիական, դրդապատճառային և այլ տեսանկյունները: Տեղեկատվության հավաքման ու մաթեմատիկական մշակման մեթոդները, գործնական մեծածավալ նյութն ակնառու թվային և տոկոսային տվյալներ արտացոլող աղյուսակները՝ ուղեկցված համոզիչ փաստարկումներով, ինչպես նաև ամփոփիչ վերլուծությունները հիմնավորում և ամբողջական են դարձնում հետազոտության տեսական ու գործնական արդյունքները: Գտնում ենք, որ սոցիոլոգիական հարցումների պլանավորման և իրականացման հանգամանալից մշակված մեթոդիկան և գործիքակազմը կարող են հաջողությամբ կիրառվել ոչ միայն մանկավարժական հետազոտություններում, այլև առհասարակ սոցիալ-ժողովրդագրական տարբեր

իրողությունների չափման, վերլուծության, ախտորոշման ու գնահատման նպատակներով:

Ատենախոսի կողմից ներկայացված Իրանի մեծահասակների կրթության վերաբերյալ առաջարկություններն ու լուծումները համապատասխանում են Իրանի մեծահասակների կրթության հիմնախնդրի առանձնահատկություններին: Դրանք էլ առավել համընդգրկուն են դարձնում աշխատանքը:

Ատենախոսությունը տրամաբանական, բովանդակային, կառուցվածքային առումով ամբողջական, ավարտուն, ինքնուրույն հետազոտություն է: Ատենախոսը դրսևորել է մանկավարժական, մեթոդաբանական, մասնագիտական գիտելիքներ և հետազոտական կարողություններ:

Ուսումնասիրության ութ եզրակացությունները հիմնախնդրի խոր ուսումնասիրության արդյունքները հավաստող հիմնարար, կառուցողական եզրահանգումներ են:

Ատենախոսության մեջ օգտագործվել են հիմնախնդրի ոլորտը ներկայացնող բավականաչափ տպագիր և էլեկտրոնային պարսկերեն և անգլերեն լեզուներով աղբյուրներ, նորմատիվ իրավական փաստաթղթեր:

Ատենախոսությունը շարադրված է գիտական աշխատանքի լեզվին ու ոճին ներկայացվող պահանջներին համապատասխան: Սեղմագիրը ներառում է ատենախոսության հիմնական դրույթները:

Նշված առավելությունների կողքին կարելի է առանձնացնել որոշ նկատառումներ.

1. Երկրորդ գլխի 2.1 և 2.2 ենթագլուխները կարծում ենք հնարավոր էր միավորել և դիտարկել «Մեծահասակների կրթության գլխավոր հասկացությունները» ենթագլխում, քանի որ «կրթություն ամբողջ կյանքի համար» կամ «ցկյանս կրթություն» հասկացություններն առնչվում են նաև մեծահասակների կրթության ոլորտին:
2. Աշխատանքում հանդիպում ենք մտքերի որոշ կրկնություններ:
3. Աշխատանքում կան համակարգչային որոշ վրիպակներ:

Վերոնշյալ նկատառումները ընդհանուր առմամբ չեն ազդում գիտական հետազոտության արժեքի և այն գնահատականի վրա, որին իրավմամբ արժանի է:

Մեր կարծիքով, Համիդոեզա Կամիարի «*Մեծահասակների կրթության հիմնախնդիրն Իրանի կրթության համակարգում*» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,
մանկավարժական գիտությունների թեկնածու՝ Ա. Տ. Մայիլյան

Ա. Տ. Մայիլյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Գավառի պետական համալսարանի
գիտական քարտուղար, բ. գ. թ., դոցենտ՝ Թ. Ա. Ասոյան

27.12.2024թ.